երկուս և այլի մի»։ Իսկ Բճնիի Վանական և Համավար եպիսկոպոսները սահմանում են «ի թեմ և կալուած վերոգրեալ եկեղեցւոյս՝ զեղջս քսան և հինգ և քաղաք մի» և հաստատում իրենց վճիռը «մերով ձեռնագրովս և կնքովս»։

Ժամանակով աւելի մօտ պատմիչները՝ ոչ Լասարիվերցին և ոչ Ուռհայեցին յիշատակութիւն չունին Կեչառուսի շինութեան մասին, այլ միայն Վարդան(*) և Մխիթար Այրիվանեցին. երկուսն էլ եկեղեցու հիմնադիր են համարում Ապիրատ իշխանին, որին Այրիվանեցին զանազանում՝ Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսից, 12,000 հեծելազօրքի պետ, մէկը ժամանակի նշանաւոր իշխաններից, որ միայն իւր խելքով և քաջութեամբ աննշան վիճակից բարձր դիրքի էր հասել։ Վարդան Ապիրատի մասին օգտւում է Մխիթար Անեցուց, բայց չի երևում, թէ վանքի շինութեան տեղեկութիւնն էլ նոյն աղբիւրից քաղած լինի։

տի աւելացնենք եւ Սիմէոն կաթուղիկոսի տեղեկութիւնը Կեչառիսի մասին. «նախապէս հիմնաւորեցեալ է ի թուոջն ՆԽԴ (= 995) յԱպիրատ իշխանէ»(*)։ Ընթերցողը տեսնում է, որ արտաքին հակասութիւններով լի են այս տեղեկութիւնները թէ շինողի և թէ շինութեան ժամանակի վերաբերութեամբ։

Նախ վերցնենք առաջին արձանագրութեան թուականը՝ ՆԶԲ (= 1033), որ միանգամայն անհամապատասխան է Գագիկ Շահնշահի (✻ 1019) և Սարգիս կաթուղիկոսի (✻ 1021) ժամանակին, ուստի եւ Զ–ն պէտք է ուղղել Ծ–ի, որ կը լինի 1003. այդ տառերի շփոթութիւնն արձանագրող գրչի կողմից աւելի հասկանալի է, քան անձնաւորութիւնների ժամանակի. թէ Մխիթար Այրիվանեցին ևս մօտաւորապէս նոյն ժամանակն ի նկատի ունի, բայց, հաւանօրէն հէնց արձանագրութեան ազդեցութեամբ։ Իսկ Չամբռի հեղինակի տուած թուականը անհամապա-



Պատկեր 123.

Ուռհայեցուց գիտենք, որ Հասանի որդի Ապիրատը Պահլաւունեաց ցեղից էր. նորա որդիքն էին Ապլջահապ և Վասակ՝ Գրիգոր Մագիստրոսի քրոջ ամուսինը. Վասակի որդիքն էին Հասան, Գրիգոր Կիւրապաղատ, Տէր Բարսեղ կաթուղիկոս եւ Ապլջահապ(**)։ Այս իշխանների մէջ յատկապէս նշանաւոր հանդիսացաւ Գրիգորը, Վասակի որդին և Ապիրատի թոռը, «զոր ասեն ունել ի զլուխս ազատականացն հինգ հարիւր թագ երևելի, զի տէր մեծ զօրաց և բազում ազատաց» էր։ Նորա մահը հանդիպեց Կաղզուանում, ուր քաջութեամբ յաղթել էր թշնամուն և ազատել Մանուչէի կեանքը. «և տարեալ թաղեցին զնա ի Կեչառուս եւ Մանուչէն եւ ամենայն զօրքն բանակին Հայոց երթայր զկնի դիւոյն»(***)։ Սրանց վերայ պի-

տասխան է նոյնիսկ սրբագրուած թուականին. երևակայութեան արգիւնք համարել չենք կարող այդ մի հեղինակի կողմից, որ իւր ամբողջ գործը փաստաթղթերի և արձանագրութիւնների վերայ է հիմնում. միւսք էլ չունէր նրա կողմից այդպիսի թուական հնարել. մնում է ընդունել, որ նա մեզ անյայտ արձանագրական կամ մատենագրական աղբիւր է ունեցել, մանաւանդ որ Վարդան յայտնում է, թէ այդ վանքը տոհմի մի ճիւղի հանգստարանն էր, ինչպէս վերև տեսանք։ Գուցէ 995 թուականը շինութեան սկզբնաւորութեան, իսկ 1003 վերջաւորութեան թուականն է։

Բայց այսքանը դեռ բաւական չէ խնդիրը լիովին պարզելու նաև շինողների անձի նկատմամբ. երկու արձանագրութիւնների մէջ, մանաւանդ ըստ Propaganda fide-ի պատճէնի, եկեղեցու շինողները կոչւում են Գրիգոր Մագիստրոս. անունների և տիտղոսների նոյնութիւնը չի կարող հիմք լինել նրանց անձը նոյ-

(*) Հրատ. Լմինի, Մոսկուա, 1861 եր. 131։

(**) Մատթ. Ուռհայեցի, բ. տպ. Վաղարշապատ, 10, 221, 269։

(***) Վարդան, 145։

(*) Չամբռ, Վաղարշապատ, 1873 եր. 283։